ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ» 8-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1979 թվականի հոկտեմբերի 18—25-ը Կրետե կղզում (Հունաստան) տեղի ունեցավ «Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի» 8-րդ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին Եվրոպայի 25 տարբեր երկրներից ժամանած Կոնֆերանսի անդամ Եկեղեցիների պատգամավորներ, ոչ անդամ բույր Եկեղեցիների, եկեղեցական զանազան կազմակերպությունների, այդ թվում՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչներ, բազմաթիվ դիտորդներ, խորհրդականներ, լրագրողներ՝ ընդամենը 405 հոգի:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, սույն համաժողովին, որպես Կոնֆերանսի անդամ Եկեղեցու պատվիրակ, իր մասնակցությունը բերեց տ. Ոսկան ծայրագույն վարդապետ Գալբաքյանը (Դամասկոս):

«Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը» ստեղծվել է 20 տարի առաջ: Նրա հիմնական նպատակն է Եվրոպայի Օրթոդոքս, Անգլիկան և Ավետարանական Եկեղեցիների ու եկեղեցական համայնքների համախմբումը: Այսօր այդ Եկեղեցիներից 112-ը իրենց եռանդուն մասնակցությունն են բերում նրա գործունեությանը:

Համաժողովն աննկատվեց «Աշխարհի համար կենդանի՝ Սուրբ Հոգու զորությամբ» ընդհանուր նշանաբանով:

Համաժողովն իր առաջին նիստում նախագահ ընտրեց դոկտ. Անդրե Ափփելին: Միաժամանակ տեղի ունեցան համաժողովի չորս առանձին խմբերի նախագահների, փոխնախագահների և քարտուղարների ընտրությունները: Երրորդ խմբի փոխնախագահ ընտրվեց Հայ Եկեղեցու ներկայացուցիչ տ. Ոսկան ծայր. վարդապետ Գալբաքյանը:

Համաժողովի տարբեր կոմիտեների և հանձնաժողովների աշխատանքներին նախորդեցին երեք հիմնական զեկուցումներ: «Սուրբ Հոգին որպես ազատագրող ուժ» թեմայով առաջինը հանդես եկավ Հունաստանի Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ պրոֆ. Խրիստոս Յաննարասը (Աթենք): «Սուրբ Հոգին անհատի անձնական կյանքում» թեմայով զեկուցում կարդաց Օքսֆորդի համալսարանի դասախոս Կալիստոս Վարեն (Մեծ Բրիտանիա): Երրորդ զեկուցումը, որի թեման էր «Ծառայել աշխարհին Սուրբ Հոգու զորությամբ», ներկայացրեց Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Ալեքսին (Տալլին):

Վերոհիշյալ զեկուցումների շուրջ տեղի ունեցած մտքերի լայն փոխանակությունից հետո ժողովի մասնակիցները չորս առանձին խմբերում տարբեր կողմերից քննարկեցին և խորացրին համաժողովի գլխավոր թեման՝ այն առնչելով Եվրոպայի Եկեղեցիների այսօրվա կյանքին: Քննարկումները տեղի ունեցան հետևյալ թեմաներով.

ա. Եվրոպայի բաժանված Եկեղեցիները դեպի համագործակցություն և միություն.

բ. Աստվածաբանությունը Եվրոպայում Աստուծո և աշխարհի առաջ.

գ. Քարոզություն և ծառայություն—Եվրոպայի Եկեղեցիների պարտավորությունը առաջիկայում.

դ. Արարչագործության մատակարարները և խաղաղության ծառաները վտանգված աշխարհում:

Աշխատանքային խմբերից յուրաքանչյուրը, քննարկելուց հետո իրեն հանձնա-

յարված թեման, հանձնաժողովին ներկայացրեց համապատասխան զեկուցագրեր։ Ներկայացված զեկուցագրերի հիման վրա համաժողովը պատրաստեց մի պատգամ ուղղված Եվրոպայի բոլոր Եկեղեցիներին և քրիստոնյաներին։ Պատգամում մասնավորապես նշված է. «Համաժողովում կարդացված զեկուցումներն ու մտքերի փոխանակությունները հարստացրին մեր հավատը Սուրբ Հոգու անձի և գործի նկատմամբ. մի անգամ ևս մենք զգացինք, որ նա ամեն օր գործում է մեր Եկեղեցում և այլազան ձևերով մեզ առաջնորդում միության ճանապարհի վրա»։

Համաժողովի վերջում շուրջ 200 պատվիրակներ մասնակցեցին Կոնֆերանսի նախագահության և գործադիր կոմիտեի նոր անդամների ընտրությանը։ Նախագահության նախագահ ընտրվեց Միրայի միտրոպոլիտ Խրիզոստոմը, որը համաժողովում ներկայացնում էր Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքությունը, որի իրավասության ներքև է գտնվում Կրետեի Եկեղեցին։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սույն թվականի հունվարի 28—31-ը Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Բուդապեշտում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) ղեկավարների հանդիպումը Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրների ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ։ Նման մի հանդիպում առաջին անգամ տեղի էր ունեցել 1977 թվականի մարտին, դարձյալ Բուդապեշտում։

Սույն հանդիպման նպատակն էր՝ է՛լ ավելի աշխուժացնել ու ջերմացնել էկումենիկ կյանքը, ամրապնդել և սերտացնել հարաբերությունները քույր Եկեղեցիների միջև՝ Քրիստոսի սիրո մեջ առավել օգտակար լինելու համար միմյանց և միասնաբար ծառայելու աշխարհի բոլոր մարդկանց, որոնք որդիներն են միևնույն Աստուծո։

Ժողովը գումարվեց Հունգարիայի ռեֆորմիստական Եկեղեցու կոլեջի մեծ սրահում։

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սույն խորհրդակցությանը մասնակցեց Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը։

Հունվարի 28-ին, երկուշաբթի օրը, աղոթքով և ողջույնի ու բարիգալստյան խոսքով ժողովը բաց արեց Հունգարիայի Եկեղեցիների էկումենիկ խորհրդի նախագահ դոկտ. Տիբոր Բարթա եպիսկոպոսը։

Ապա ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը։ Գլխավոր քարտուղարի զեկուցման մեջ առաջ քաշված հարցերի շուրջ, հաջորդական հինգ նիստերի ընթացքում, տեղի ունեցան ելույթներ և մտքերի լայն փոխանակություն։ Եղբայրական հարաբերություններ մթնոլորտում առաջադրված բոլոր հարցերն ամփոփվեցին համապատասխան որոշումներում։

Խորհրդակցության մասնակիցները միահամուռ այն կարծիքը հայտնեցին, որ ԵՀԽ-ն բոլոր Եկեղեցիների վստահությունը վայելող համաշխարհային մեծ կազմակերպություն է, հետևաբար նրա հաջողությունները պետք է նկատել յուրաքանչյուր անդամ Եկեղեցու հաջողությունը։ Իսկ բոլոր Եկեղեցիները օղակողը ինքը՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսն է. նրա հավատով և սիրով ոգեշնչված՝ բոլոր եկեղեցիները պարտավոր են շարունակել իրենց աստվածահաճո ծառայությունը հանուն առաջադիմության և մարդասիրության։

Խորհրդակցությունում սոցիալիստական երկրների Եկեղեցիների ներկայացուցիչներին մասնավորապես մտահոգում և զբաղեցնում էին ներկա աշխարհը և համայն մարդկությունը հուզող այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխարհի խաղաղության պահպանման, ցեղային խտրականության վերացման, մարդու իրավունքների, կրոնի ազատության, տնտեսական և հոգևոր-բարոյական ռեսուրսների օգտագործման ու բաշխման վերաբերյալ հարցերը։

Ժողովի մասնակիցները նշեցին, որ այսօր չի կարելի լինել քրիստոնյա և չպայքարել այնպիսի մեղքի դեմ, ինչպիսին է, օրինակ, ցեղասպանությունը, որը պետք է արմատախիլ անել մարդկության միջից, որպեսզի նրանք չունենան նրանից ծնվող մյուս մեղքերը՝ լինի դա ցեղասպանություն կամ ապարտեիդ։